ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » սեպտեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-355-16.08.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1205-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-355-16.08.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է խստացնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ (Ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը) հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար սահմանված պատժաչափը, մասնավորապես, առավելագույնը երկու ամիս ժամկետով *կալանքը փոխարինել ազատազրկմամբ*՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Ինչպես բխում է օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորումից, առաջարկվող կարգավորումը պայմանավորված է տվյալ հոդվածով նախատեսված հանցագործությունների աճի դինամիկայով, ինչպես նաև այն հանգամանքով, որ պատժի խստացումը կզսպի և զերծ կպահի ապօրինի գործողությունների իրականացումից:

Ընդունելի համարելով օրենքի նախագծով նախատեսվող ընդհանուր կարգավորումները՝ այնուամենայնիվ ստորև ներկայացնում ենք օրենքի նախագծի վերաբերյալ որոշ նկատառումներ.

Նախ և առաջ, անդրադառնալով օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկներին, հարկ ենք համարում նշել, որ քրեական օրենսգրքում ամրագրված պատժի նպատակները փոխկապակցված և փոխհամաձայնեցված են, մեկ նպատակը ենթադրում է մյուսները, իսկ յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին: Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Այնուամենայնիվ քրեական պատիժը հանցավորության դեմ պայքարի գլխավոր միջոցը չէ, այն հանցագործության, հանցավորության և նրա նպատակների հարաբերակցության

մեջ ունի երկրորդային դեր: *Պատժի նպատակի իրականացման համար առավել արդյունավետ են պատժի անխուսափելիությունը և պետության կողմից այն ժամանակին կիրառելը, քան պատժի խստությունը*: Հետևաբար, օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ արտահայտված այն դիրքորոշումը, որ առավել խիստ պատիժը կզսպի տվյալ հանցագործության կատարումը և կնպաստի հանցագործության դինամիկայի աճի նվազեցմանը, հիմնավորված չէ:

Ինչ վերաբերում է օրենքի նախագծով առաջարկվող կարգավորմանը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար սահմանված պատժաչափի խստացման մասով, հայտնում ենք հետևյալը.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի գործող խմբագրությունը՝ անտառային ֆոնդի տարածքներում, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տարածքներում կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելու կամ ոչնչացնելու, պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելու կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելու համար, եթե այդ գործողություններն զգալի վնաս են պատճառել՝ նախատեսում է պատիժ՝ *տուգանք*՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, *կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով*:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար սահմանված պատիժների՝ նշված հաջորդականությունը (կալանքից մինչև ազատազրկում) նախատեսված է նաև նշված հոդվածի 1-ին մասին հաջորդող՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում:

Օրենքի նախագծով առաջարկվող կարգավորման արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար սահմանված պատժաչափը՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով *կալանքը* փոխարինվում է *ազատազրկմամբ*՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քրեական պատիժների համակարգում պատժատեսակներն ունեն տրամաբանական դասավորվածություն, համակարգված են նվազ խիստ պատժից դեպի առավել խիստը՝ հաջորդականությամբ: Պատիժների նման աստիճանական դասավորվածությունը կարևոր նշանակություն ունի օրենսդիրի և առավել ևս դատարանի համար, ինչն ակնհայտ է դարձնում, թե օրենսդիրն ինչպես է գնահատում յուրաքանչյուր պատժատեսակի հարաբերական խստությունը և կողմնորոշում դատարանին առավել արդյունավետ պատժատեսակի ընտրության հարցում:

Մասնավորապես՝ կալանքը դատապարտյալի համար բացահայտում է կալանքի էությունը և նախազգուշացնում նրան, որ այս պատժատեսակին կարող է հաջորդել ավելի խիստ պատիժ՝ ազատազրկում, որը պատիժների համակարգի առավել խիստ պատժատեսակն է և կիրառվում է միայն այն դեպքում, երբ պատժի այլ տեսակները չեն կարող ապահովել դատապարտյալի ուղղումը և պատժի մյուս նպատակների իրականացումը:

Ամփոփելով շարադրվածը՝ գտնում ենք, որ օրենքի նախագծով նախատեսված կարգավորման արդյունքում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար սահմանված պատժաչափը խստացնելիս՝ կալանքն ազատազրկմամբ փոխարինելիս, խախտվում է տվյալ հոդվածի բոլոր մասերի դիսպոզիցիաներում նախատեսված արարքների համար սահմանված պատժատեսակների աստիճանական դասավորվածությունը, հետևաբար, առաջարկում ենք ոչ թե կալանքը փոխարինել ազատազրկմամբ, այլ նշված հոդվածի 1-ին մասի սանկցիայում նախատեսել նաև ազատազրկման ձևով պատիժ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում քննարկվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության մշակմամբ համանման օրենքի նախագիծ, որը քննարկվող խնդիրներին առավել համապարփակ լուծումներ է առաջարկում: Այդ կապակցությամբ օրենքի նախագծի հեղինակին առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ օրենքի նախագծի քննարկումից, համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ մեկ միասնական օրենքի նախագծով հանդես գալու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2018 թվականի N 1205 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-355-16.08.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
2018 թ. սեպտեմբերի 12
Երևան

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ
Պ-355-16.08.2018-ՊԻՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը՝ շարադրել նոր խմբագրությամբ. «պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կարեւորագույն խնդիրներից է ապօրինի ծառահատումների դեմ պայքարը: Ըստ ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ քր.օր-ի 296 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 2016 թվականին գրանցվել է 16, 2017 թվականին՝ 35, 2018 թվականի առաջին կիսամյակում՝ 27 հանցագործություններ, ինչը վկայում է նշված հանցագործությունների աճի դինամիկայի մասին: Գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Անտառային ֆոնդի տարածքներում, ինչպես նաեւ անտառային ֆոնդի մեջ չմտնող տարածքներում կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելու կամ ոչնչացնելու, պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելու կամ մինչեւ աճի դադարեցման աստիճանի վնասելու համար, որպես պատիժ նախատեսում է տուգանք՝ կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, որը անհամեմատ փոքր պատժաչափ է նման հանցագործությունների համար: Հարկ եմ համարում նշել, որ նման իրավիճակը չի զսպում վանդալներին զերծ մնալու նման հանցագործություններ իրականացնելուց: Արդյունքում հատվում են անտառները, ծառերը եւ դրա հետեւանքով մեծ վնաս է հասցվում շրջակա միջավայրին՝ բնությանը: Նման հանցագործությունների դեպքում գրեթե իննսուն կամ հարյուր տոկոսով, որպես պատիժ կիրառվում

է տուգանքը, կամ կալանքը, որի արդյունքում հանցագործություն կատարած անձինք ազատվում են ավելի խիստ պատժի ենթարկվելուց եւ նման հանգամանքը չի կարող իր ազդեցությունը չունենալ նշված հանցագործության դեմ պայաքարում:

Ուստի, առաջարկում եմ նշված հանցագործությունների համար նախատեսված պատժաչափը խստացնել եւ երկամսյա կալանքը փոխարինել առավելագույնը երկու տարվա ազատազրկմամբ: Արդյունքում տվյալ հանցագործությունների համար նախատեսված պատիժի խստացումը կզսպի եւ զերծ կպահի իրականացնել նմանատիպ ապօրինի գործողություններ: